բութեան հոգւոյ մերոյ բանականի որում 'ի փչմանէ արարչէն մերմէ ստացայք և սիրով միաբանութեամբ համահաւասար ամենեքեանս իշցուք և մատերուք առ 'ի ընտրողութիւն բարեգոյն Օրինաց և անխախտելի սահմանաց և զամենայն զոր ինչ 'ի մէնջ ընտրեալ և սահմանեալ նոյն ժամայն դիցուք 'ի միտս մեր զի ամենեքեան ըստ իւրաքանչիւրոք ինքն ազատապէս թագաւոր գոլով դնէ մատուցս իւր 'ի վերայ բանին գործոյն ստացուածոց և կենաց իւրոց և սահմանին իւրոյ հատանելով վճիռ անքակտելի 'ի վերայ իւր հաստատութեամբ յօրինացս անխախտելեօք, և սա յօրէնս մեր թագաւորեսցի 'ի վերայ ազգին Հայոց և երեսս աշխարհին Հայաստանեաց։

Այս անխախտելի Օրէնս մեր լցի աշխարհ մեր արամբք և արասցէ մեզ երջանիկ և փրկեսցէ իշխանս մեր 'ի խղճմտանաց դատողութենէ պարփակեսցի բերանս ճշգոյողաց և առնէ մեզ ազատ 'ի ծառայութենէ և զսպէ վարս մեր 'ի հպարտութենէ և անձնահաճոյութենէ, և յորդորէ մեզ առ 'ի գործս բարիս, որում նովաւ պարտաւոր առնէ մեզ հեռանալ 'ի գործոց չարութենէ որում ծանեաք պատիժս և նախատինս ըստ Օրինօք մերովք սովաւ ծանիցեն ամենեքեան պտուղ գործոց ձեռաց իւրոց, և կամաւորապէս հատուցանեմք պարտս մեր ընդ միմեանց